

Տ. ՄԽԻԹԱՐ ԱԲԵՂԱ ԳՈՒՏՈՒՉՅԱՆ



Ծնվել է 1965 թ. փետրվարի 12-ին Բեյրութում:

Նախնական կրթությունն ստացել է տեղի Սահակ-Մեսրոպյան և Սահակյան վարժարաններում:

1978 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1985 թ., հոգևոր ճեմարանի դասընթացներն ավարտելուց հետո, աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատանը, միաժամանակ որպես ազատ ունկնդիր մասնակցել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դասընթացներին:

1986 թ. մարտի 13-ին պաշտպանել է ավարտական՝ «Հայոց պատարագի ավանդական մեղեդիները» թեմայով և ստացել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դիպլոմ:

1986 թ. օգոստոսին ծառայության է նշանակվել Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյի հայկական եկեղեցում:

Միաժամանակ ստանձնել է տեղի Նուպարյան և Ալեք Մանուկյան վարժարանների հայկական բաժինների տնօրինությունը: Ղեկավարել է նաև «Մակար Եկմալյան» քառաձայն երկսեռ խումբը:

Քառասունքը Մայր Աթոռում անցկացնելուց հետո կմեկնի Արգենտինա՝ ի ծառայություն տեղի հայ հավատացյալ ժողովրդի: